ՊԱՇՏՈՆ

	Ֆինանսական ինստիտուտների վարչության առաջատար մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	22/08/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	05/09/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Ֆինանսական ինստիտուտների վարչության առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թղթակցային հարաբերությունների հաստատման նպատակով՝ հավանական թղթակից բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների և պայմանների ուսումնասիրության իրականացում, հաստատվող թղթակցային հարաբերությունների նպատակահարմարության հիմնավորում, բանակցությունների վարում, թղթակցային հաշիվների բացման գործընթացի համակարգում:
- Գործող թղթակից բանկերի տվյալների բազայի հաշվառում, թղթակից բանկերի ցանցի զարգացման, նոր թղթակցային հաշիվների բացման կամ գործող թղթակցային հաշիվների փակման անհրաժեշտության վերաբերյալ վերլուծությունների և առաջարկների ներկայացում
- Վարկավորման ոլորտում ֆինանսավորում տրամադրող միջազգային դոնոր կազմակերպությունների (ֆոնդերի) հետ հարաբերությունների հաստատում և աշխատանքների համակարգում, անհրաժեշտ տեղեկատվության/փաստաթղթերի պատրաստում և ներկայացում Բանկի համապատասխան ստորաբաժանումներին/գործընկեր կազմակերպություններին
- Թղթակից/գործընկեր բանկերի և/կամ միջազգային ֆինանսական կառույցներից ստացվող հարցումների/հարցաթերթիկների լրացման համակարգում, անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի հավաքագրման կազմակերպում և համակարգում,
- Փաստաթղթային ակրեդիտիվների, բանկային երաշխիքների և առևտրի ֆինանսավորման գործառնությունների կազմակերպում և համակարգում, կորպորատիվ հաճախորդներին մասնագիտական խորհրդատվության տրամադրում
- Թղթակից/գործընկեր բանկերի և/կամ միջազգային ֆինանսական կառույցների հետ առևտրի ֆինանսավորման գործարքների պայմանների վերաբերյալ բանակցությունների վարում,

- Փաստաթղթային ակրեդիտիվների, բանկային երաշխիքների նախագծերի պատրաստում, ներկայացված փաստաթղթային փաթեթների ստուգում՝ միջազգային միասնական կանոնների դրույթներին համապատասխան,
- Միջազգային բանկային և փաստաթղթային գործառնություններին առնչվող Բանկի աշխատակիցների և հաճախորդների մասնագիտական վերապատրաստման և որակավորման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ տեղեկատվական նյութերի պատրաստում, ուսուցումների իրականացում,
- SWIFT համակարգում անհրաժեշտ ֆորմատով հաղորդագրությունների ստեղծում, ստուգում և ուղարկման կազմակերպում՝ փաստաթղթային գործառնությունների (ակրեդիտիվ, երաշխիք) և միջբանկային հարաբերությունների հետ կապված,
- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների մշակման գործընթացին մասնակցություն՝ փաստաթղթային գործառնությունների, լորո թղթակցային հաշիվների և միջազգային փոխանցումների գծով
- Փաստաթղթային ակրեդիտիվների, բանկային երաշխիքների և առևտրի ֆինանսավորման գործառնությունների, թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման գործընթացները նկարագրող ներքին իրավական ակտերի մշակում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Ֆինանսաբանկային ոլորտում առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ: Առևտրի ֆինանսավորման և/կամ թղթակցային հարաբերությունների բնագավառում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- Լեզուների իմացություն՝ Հայերեն, անգլերեն, ռուսերեն /ցանկալի է նաև այլ լեզուների իմացությունը/ լեզուների ազատ և անկաշկանդ տիրապետում
- Համակարգչային գիտելիքներ
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն, Բանկային գործունեությանն առնչվող ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի իմացություն
- Բաժնի գործունեությանն առնչվող մասնագիտական գիտելիքներ, մասնավորապես Առևտրի Միասնական Պալատի (ICC) կանոնների իմացություն, SWIFT համակարգի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Բանավոր և գրավոր հաղորդակցման և բանակցություններ վարելու գերազանց հմտություններ
- Անալիտիկ և ստեղծագործական մտածելակերպ
- Ընդհանուր զարգացվածություն
- Կազմակերպչական հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/123 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/